մնացի մինչև ցայսօր, այլ որովհետև որ տեսանեմ ժամանակս կենաց մերոց ոչ յաւելու քանց եօթանասուն ամս, և զանազան փորձառութիւն նման այս բանիս 'ի ժամանակի կենաց իմոց հանդիպեցաւ յիս, որում աչօք իմօք տեսի բազմաց և 'ի մէջ այսպիսի իրաց խորհրդի երբեմն երևեցայ և յոյժ երկմտութեամբ 'ի միտս առի և հաստատեցի սիրտ իմ փորձառութեամբ. նաև ժամանակն ծառայ գոլոյ տղայութեան իմոյ արբունս հասակի հասուցի, և այժմոյս որ գտայ զիս ազատ և փորձառեալ այսպիսի խորհրդոյս՝ ոչ կամեցայ թոյլ տալոյ զի թաղեսցեն ընդ իս 'ի ամուր դամբարանի իմոյ այն որ հաւատացեալ եմ, զի օգուտ յազգին և աշխարհին իմոյ գոլ կարէ, վասն այսորիկ խոնարհաբար ներուումն 'ի նախահարց իմոց խնդրելով յառաջացայ այն որ 'ի մէջ մտաց իմոց թուելով բարի վասն ազգին և աշխարհին իմոյ եղի առ այսմ, զի ժամանակ ընդ ժամանակս երևեսցի առաջի աչաց ընթերցողաց ազգին իմոյ, զի իմաստնագոյնքն լցուցանելով պակասութիւնն գրեցելոյն իմոյ, եթէ հաճեսցի կամաց և հաճոյից իւրեանց՝ ջանասցեն 'ի գործ ածել։

Հաստատելով ասացուածքն իմ, եդից վկայութիւն 'ի սուրբ գրոց ըստ ուսուցանելոյ մեզ սրբոյ առաքելոյն Պողոսի, զի պարտ է ամենայն խօսից լինիլ վկայութիւն սուրբ գրոց՝ նախ բե-